ROLL
ՍԱՀԵՔ

RUN
ՎԱԶԵՔ

DANCE
ՊԱՐԵՔ

CHILL
ՀԱՆԳՍՏԱՑԵՔ

WALK
ՔԱՅԼԵՔ

# Մենք հրավիրում ենք Ձեզ:

## Բիզնես հնարավորություններ CicLAvia-ում

CICLAVIA

# MEET THE HOLLYWOODS

Presented by Metro | Կազմակերպված Metro-ի կողմից

**Կիրակի, հուլիսի 19, 2026թ.**
**ժ. 9:00-16:00**




**Ունե՞ք հարցեր կամ մտահոգություններ:**
**Էլ. փոստ ուղարկեք՝ info@ciclavia.org կամ զանգահարեք 213.355.8500:**

**Լոս Անջելեսում փողոցների փակման թույլտվության հետ կապված մտահոգությունների դեպքում** կապվեք Լոս Անջելեսի Հատուկ միջոցառումների բաժնի Փողոցային ծառայությունների, հետազոտությունների և իրականացման բյուրոյի հետ (LA Bureau of Street Services, Investigation and Enforcement Division, Special Events)՝ 213.847.6000 հեռախոսահամարով:

**Ուեսթ Հոլիվուդում փողոցների փակման թույլտվության հետ կապված մտահոգությունների դեպքում** կապվեք Ուեսթ Հոլիվուդի քաղաքապետարանի հետ՝ *eventsinfo@weho.org* հեռախոսահամարով:

CicLAvia-ն 501(c)(3) հոդվածով կարգավորվող շահույթ չհետապնդող կազմակերպություն է: CicLAvia-ի այս միջոցառումն իրականացվում է Ուեսթ Հոլիվուդ, Լոս Անջելես քաղաքների և Metro-ի հետ համագործակցությամբ:


CICLAVIA

MEET THE HOLLYWOODS

Presented by Metro | Կազմակերպված Metro-ի կողմից


Sunday
July 19, 2026
9am-4pm


Կիրակի
հուլիսի 19, 2026թ.
ժ. 9:00-16:00


CICLAVIA 501(c)(3) nonprofit

OPEN STREETS MADE POSSIBLE BY Metro

LADOT

City of Los Angeles

**ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ** ciclavia.org / @ciclavia / info@ciclavia.org / 213.355.8500



CicLAvia-ն փողոցները ապահով, մեքենաներից զերծ վայր է դարձնում հազարավոր մարդկանց համար, ուր նրանք կարող են հեծանիվ վարել, զբոսնել, խաղալ և հետազոտել: Այս միջոցառումն անվճար է, նախատեսված է ընտանիքների համար և բաց է հանրության համար: Այն նաև շատ լավ հնարավորություն է ցուցադրելու ձեր տեղական բիզնեսը համայնքի բնակիչներին:

## Ի՞նչ կտեսնեք CicLAvia-ի ընթացքում:

- Հազարավոր մարդիկ շրջում են մեքենաներից զերծ փողոցներում՝ ոտքով, հեծանիվով, սկուտերով, սքեյթբորդով կամ ոչ մոտորացված այլ անվավոր փոխադրամիջոցներով
- Լավ տրամադրությամբ մարդիկ, ովքեր ցանկանում են աջակցել իրենց համայնքում գտնվող ռեստորաններին, խանութներին և բիզնեսներին
- Ապահով, ուրախ և ընտանիքների համար նախատեսված միջոցառումներ կենտրոնական հատվածներում և երթուղու ողջ երկայնքով
- Բիզնեսներ և համայնքային խմբեր, որոնք ակտիվություն են հաղորդում մայթերին և երթուղու երկայնքով ձգվող այլ տարածքներին
- Մասնակիցներ, որոնք օգտվում են զուգարաններից, անվճար ջրից, առաջին բուժօգնությունից, աղբահանությունից/վերամշակումից, հեծանիվների կայանատեղիներից, հեծանիվների անվճար նորոգումից և CicLAvia-ի կողմից երթուղու երկայնքով տեղադրված տեղեկատվական տաղավարներից
- Երթուղու երկայնքով և մեքենաների հատման կետերում գործում են երթևեկության, անվտանգության և հանրային հսկողության ծառայություններ

## Օգտվեք ձեր դռան կողքով անցնող հազարավոր հավանական հաճախորդների հնարավորությունից

**ԲԱՑ Է**

**ՊԼԱՆԱՎՈՐԵՔ ԲԱՑԵԼ ՁԵՐ ԲԻԶՆԵՍԸ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՕՐԸ (ժ 9:00-16:00)** Ուշադրություն գրավեք ձեր խանութի ցուցափեղկերին՝ նշաններով և ցուցանակներով:

**ԴՈՒՐՍ ՀԱՆԵՔ ՁԵՐ ԱՊՐԱՆՔԸ** Ձեզ թույլատրվա՞ծ է օգտագործել ձեր բիզնեսին հարակից ավտոկայանատեղին կամ առջևի մայթը: Դրսում ներկայացնեք ձեր ապրանքները, երաժշտությունը կամ դրսում նստելու հնարավորություն ստեղծեք: Հիշեք, որ պետք է պահպանեք 4' ազատ տարածք ADA-ի մուտքի համար: (Նկատի ունեցեք՝ փողոցներում չի թույլատրվում անշարժ օբյեկտների տեղակայել):

**ՕԳՆԵՔ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆԸ** Փակցրեք CicLAvia-ի պաստառ կամ ձեր հաճախորդներին տվեք CicLAvia-ի թերթոններ: Պահանջեք ռեսուրսներ՝ ***info@ciclavia.org:***

**ԱՌԱՋԱՐԿԵՔ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՏՈՒԿ ԱԿՑԻԱ ԿԱՄ ԶԵՂՉ** Միջոցառման օրը հատուկ ակցիա կամ զեղչ առաջարկեք և անվճար նշվեք մեր կայքում*:

**ՑՈՒՑԱԴՐԵՔ ՁԵՐ ԲԻԶՆԵՍԸ ՄԵՐ ԹՎԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ** Երթուղու ողջ երկայնքով տեղակայված բիզնեսները կարող են ներառվել մեր ինտերակտիվ թվային քարտեզում (map.ciclavia.org)*:

**Մասնակցելու համար էլփոստ ուղարկեք **info@ciclavia.org** կամ զանգահարեք **213.355.8500:** Նշեք ձեր բիզնեսի անվանումը, հասցեն և կայքը (եթե առկա է)՝ հատուկ առաջարկի հետ միասին (եթե տրամադրվում է): Ներկայացման վերջնաժամկետն է՝ **հուլիսի 16, հինգշաբթի:** Ենթակա է հաստատման:*

**ՈՒՆԵ՞Ք ՀԱՐՑԵՐ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՈՐՆ Է ԼԱՎԱԳՈՒՅՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ ՁԵՐ ԲԻԶՆԵՍԻ ՀԱՄԱՐ:** Դիմեք մեզ՝ ***info@ciclavia.org*** կամ **213.355.8500:**



Տրամադրեք նստատեղեր


Ցույց տվեք ապրանքներ



Դուրս բերեք Ձեր բիզնեսը


Միացրեք երաժշտությունը դրսում


Առաջարկեք նմուշներ



Ավելացրեք նշաններ և պաստառներ

## Ինչպե՞ս է կարգավորվելու մեքենաների մուտքը և ավտոկայանումը

- **ԵՐԹՈՒՂՈՒ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՈԼՈՐ ՄԵՐՁԱՏԱՐ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ԿՓԱԿՎԵՆ, ԵՎ ԴՐԱՆՑ ՄՈՒՏՔԸ ԿԱՐԳԵԼԱՓԱԿՎԻ** սկսած հուլիսի 19, կիրակի, ժ. 7:00-ից մինչև մոտ ժ. 18:00-ը Ավտոմեքենաները չեն կարողանա մտնել երթուղի կամ դուրս գալ այնտեղից այս ժամանակահատվածի ընթացքում:
- Եթե ձեր ճանապարհը փակ է և պետք է օգտագործեք մեքենան հուլիսի 19-ին, կիրակի, ապա այդ օրը նախքան ժ. 7:00-ը կայանեք այն այլ վայրում:
- Փողոցների փակումը կսկսվի ժ. 4:00-ից 6:00-ը, և երթուղին ամբողջությամբ փակ կլինի ժ. 7:00-ի դրությամբ: Միջոցառումը կիրականացվի ժ. 9:00–16:00-ը, և փողոցները ամբողջությամբ կբացվեն ավտոմեքենաների համար մինչև մոտ ժ. 18:00-ը:
- **Ավտոմեքենաները կարող են որոշ հիմնական փողոցներում հատել երթուղին (տես քարտեզը):** Երթուղուն հարակից փողոցները բաց կլինեն տեղի բնակիչների և բիզնեսների մուտքի համար:
- **ԱՎՏՈԿԱՅԱՆՈՒՄ ՉԻ** թույլատրվի **Santa Monica Blvd-ում՝ San Vicente փողոցից մինչև La Brea պողոտա՝** հուլիսի 19-ին, կիրակի, ժ. 4:00-ից մինչև ժ. 18:00-ը: **ԱՎՏՈԿԱՅԱՆՈՒՄ ՉԻ** թույլատրվի **CicLAvia երթուղու մնացած հատվածի վրա (տես քարտեզը)** հուլիսի 19-ին, կիրակի, ժ. 1:00-ից մինչև ժ. 18:00-ը: **Ավտոկայանման սահմանափակումների մասին ծանուցում կտրվի, և արդեն կայանված ավտոմեքենաները դուրս կհանվեն:**
- Կարող են լինել նաև կայանման լրացուցիչ սահմանափակումներ երթուղուն հարակից փողոցներում: Խնդրում ենք ուշադրություն դարձնել ձեր բնակավայրի մոտ փակցված կայանման սահմանափակումների մասին ծանուցումներին:
- **Փողոցների փակ ժամերին առաքման ծառայությունների վարորդներին կարգելվի մեքենա վարել կամ կայանել երթուղու վրա:** Խնդրում ենք ուղղորդել վարորդներին կարճատև կանգնելու կամ կայանելու համար օգտվել հարակից կողմնային փողոցներից:
- **Ավտոկայանման փոխհատուցում** Եթե դուք բնակվում կամ աշխատում եք անմիջապես երթուղու վրա, ապա CicLAvia-ն **կարող է փոխհատուցել** մինչև $20՝ յուրաքանչյուր մեքենայի կայանման ծախսերի համար, որոնք կատարվել են հուլիսի 18-ից, շաբաթ, ժ. 20:00-ից մինչև հուլիսի 19-ը, կիրակի, ժ. 18:00-ը: Փոխհատուցում ստանալու համար էլփոստով ուղարկեք ձեր կայանման կտրոնը և բնակության կամ աշխատանքի վայրը հաստատող փաստաթուղթը հետևյալ էլ հասցեին՝ ***info@ciclavia.org***, ԹԵՄԱ՝ Parking Reimbursement:

**CICLAVIA-Ի ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԻՄԵՔ՝** Meisha Rainman / meisha@ciclavia.org